№ 9. Մարտի 8. 1873 Մարտի 8. № 9.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ.

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պէտք է դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ".

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու տուն) և պ. [illegible] խանութում։

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Մանուր յայտարարութեան ամեն տողը պէտք է վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվում են հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիարէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հոգևորականութիւն և ժողովուրդ.—Ներքին տեսութիւն. Փոխադարձ կրէդիտի ընկերութիւնը. Նամակ Երևանից. Նամակ Վաղարշապատից. Նամակ Նոր-Նախիջևանից. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Կաթոլիկութիւնը Շվէյցարիայում. Նամակ Կ. Պօլսից.—Խառն լուրեր.—Առևտրական.—Յայտարարութիւններ.

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

I

Հռոմէական պետութիւնը հնացած էր, նրա կրթութիւնը, հիմնված մենավաճառութեան և արտօնութեան սկզբի վրա, օրհասականին էր հասած։ Հռոմէական կրթութիւնը, որի ազդեցութեանը ենթարկված էր ամբողջ աշխարհը՝ հիմնվում էր անհաւասարութեան, ստրկութեան, ազնուականների տիրապետութեան թէ պաշտօնական կեանքի թէ հողի սեփականութեան մէջ, կանանց մտաւոր և հասարակական ստրկութեան, անհատի բռնադատութեան,—մի խօսքով մի քանիսների արտօնութեան, իսկ մեծ մասի ստրկութեան սկզբների վրա էր կայանում նրա ամբողջ պետական կազմակերպութիւնը։

II

Հասկանալի է, որ երբ յայտնվեցաւ քրիստոնէութեան պէս ազատամիտ, հաւասարութեան և մարդի անհատական իրաւունքների վրա հիմնած վարդապետութիւնը, որ աներկիւղ ասում էր թէ՝ վերջինները պէտք լինին առաջինները, թէ ամենից դժուար է մեծերին և հարուստներին Աստուծու արքայութիւնը ժառանգելու, թէ ամենքը, ինչպէս փոքրը այնպէս և մեծը հաւասար են միմեանց և ուրիշ տէր չունեն, բացի երկնային տիրոջից, որ ամենքի հայրն է—հասկանալի է, որ այդ տեսակ նոր հասարակական և յեղափոխական վարդապետութեան երևալուն պէս, հռոմէական աշխարհը անմարմին ուրուականի նման անհետացաւ։

III

Քրիստոնէութեան առաջին դարերում եկեղեցին հանդիսանում էր որպէս վերանորոգող, յեղափոխական, միշտ յառաջադէմ հիմնարկութիւն, իսկ հոգևորականները,—որպէս ժողովրդական պաշտօնեայք։ Նրանք աշխարհի փառքին չէին ձգտում, նրանք մի գաղափար ունէին, որին անդադար հետևում էին, նրանք չէին բռնադատում, ճնշում ու հարստահարում ժողովրդին՝ ամեն հոգևորականները ընտրվում էին ժողովրդից։ Հասկանալի է, որ նրանք պէտք սիրած և պատված լինէին ժողովրդից, հասկանալի է, որ ժողովրդական պէտք լինէին...

IV

Միջին դարերի սկզբներում հոգևորականներն էին որք վանքերի մէջ փակված, պարապում էին ժամանակակից գիտութեան զանազան ճիւղերով, թէ հին աշխարհից ժառանգած յունական և հռոմէական կրթութեան արդիւնքը, գրականութիւնը հետազօտելով, թէ բնութեան ույժերը և երևոյթները գիտնական փորձերին ենթարկելով։ Ժամանակակից բժշկութիւնը իր սկզբները ստացաւ վանքերում։

V

Բայց փոքր առ փոքր եկեղեցու պաշտօնեաները մի կողմից շեղվելով բարոյական մաքուր քրիստոնէութենից, միւս կողմից էլ ժամանակակից լուսաւորութեան հոսանքից անդադար յետ մնալով,—այլ ևս չը կարողացան իրանց գոյութեամբ համապատասխանել ժողովրդի պահանջներին, այլ ևս չը կարողացան իրանց վրա ժողովրդական անունը կրել...

VI

Առաջին դարերի եպիսկոպոսները (ինչպէս և հայոց եկեղեցու մէջ) *) բնութեանը համապատասխան ընտանեկան կեանք էին վարում,—նրանք պսակված էին։

Եկեղեցու ամեն յայտնութիւնը համարվում էր աստուածային շնորհ և ծախվել չէր կարող...

Եկաւ ժամանակ, երբ եկեղեցու պաշտօնեաները, քրիստոնէութեան պաշտպաններ լինելու տեղը, ոտնակոխ անելով քրիստոնէութեան սկզբները,—սկսեցին աշխարհային փառքերի, հարստութեան ու շռայլութեանը հետևել, վարել անբարոյական և բնութեան կանոններին դէմ կեանքը, նիւթական հարստութեան ծարաւ յագեցուցանելու համար, Աստուծու ամեն մի շնորհը փողով ծախել...

VII

Այդ ուղղութեան վերջին խօսքն էր այն լիրբ սկզբունքը, որ եզուիտների համար դրօշակ է դարձել, և որ քիչ շատ յայտնվում է բոլոր հոգևորականների մէջ, թէ՝ նպատակը արդարացնում է միջոցները... այսինքն նպատակին հասնելու համար, ներելի են ամեն տեսակ ամենաաններելի միջոցները։

Այդ է պատճառ, որ միջին դարերում, մինչև որ յայտնվեցաւ բողոքականութեան զօրեղ ընդդիմադրութիւնը, կաթոլիկ եկեղեցու գոյութիւնը պահպանվում էր սրով, թոյնով, փողով, կաշառքով, սպանութիւններով, զանազան կանանց հովանաւորութեամբ, դաւաճանութիւններով, սիրականներով...մի խօսքով բոլորը ներելի էր, միայն որ նպատակը հասած լինէր ..

VIII

Հասկանալի է որ այդ տեսակ բարոյական անկման դրութեան մէջ գտնվելով, կաթոլիկութիւնը չէր կարող երկար ժամանակ տիրել ամբողջ աշխարհի վրա և, վաղ թէ ուշ, պէտք յայտնվէր մի ուրիշ դաւանութիւն, բողոքականութիւնը, որ պէտք յեղափոխական դրօշակ բարձրացնէր կաթոլիկութեան հնացած և լըրացած հոգևորականութեան դէմ...

Կաթոլիկութեան անպիտանութիւնն էր, որ ծնեց բողոքականութիւնը։

IX

Այժմ նայենք մեր եկեղեցու վերա։ Միթէ նա նոյն է որ Լուսաւորչի ժամանակն էր։ Միթէ մեր այժմեան հոգևորականները նոյն խորին յարգանք և պատիւ ունեն ժողովրդի մէջ, ինչպէս հինգերորդ դարի հայ հոգևորականները, որք առաջնորդում էին իրանց հզօր ձեռքով ժողովրդական շարժմանը Ջրադաշտի հետևողների դէմ.. Միթէ նրանք ժողովրդական են, ինչպէս առաջ...

X

Բնութեանը համեմատ ընտանեկան կեանքից հեռու, ժողովրդական փողերը վատնող, խաւարութիւն գցող, ինտրիգաներ վարող, փառքի պատուանշաններին հետևող, անգործ, անշարժ, ագահ, մոլեռանդ, ժամանակակից գիտութենից և ճշմարտութենից յետ մնացող, ժողովրդական կրթութիւնը խօսքով քարոզող, բայց գործով նրա զարգացմանը արգելող, ամեն նորութեան և լուսաւորութեան ընդդիմադրող մարդիկ... Սրանք են ժողովրդական հոգևորականների մեծ մասը...

XI

Եւ զարմանալի չէ, որ քանի գնում է, հայոց եկեղեցու ծոցից, Սուրբ Լուսաւորչի ջանքերով մաքուր հիմնած, բայց մեր արեղաներով և քահանաներով սկզբնական մաքրութեամբ չը պահպանված եկեղեցուց, անդադար անջատվում են և թշնամանում են մեր եղբայրները՝ մին բողոքական է դառնում, միւսը կաթոլիկ։

Իսկ երկպառակութիւն գցողը ո՞վ է.....

XII

Մի տեղ այս ինչ մարդ կամենում է պսակվել մի աղջկայ հետ,—անկարելի է ասում է արեղան կամ քահանան, դուք մօտիկ ազգականներ էք...տղէն հարուստ է լինում, տալիս է նրան 100, 200 ռուբլի և,—հոգևորականը կատարում է պսակը։ Միւս տեղ աղքատը այնքան ռուբլի է տալիս իրան պսակելու համար,—պահանջում են աւելի...նա չունի փող,—և ստիպված է լինում դիմել կաթոլիկ կամ բողոքական քահանային։ Մի ուրիշ տեղ այս ինչ հոգևորական իր տեղը ստացել է կաշառք տալով, և ինքն էլ կաշառքներ է ընդունում տեղերը ստորադրեալներին բաժանելու համար...և այլն։

XIII

Ժողովուրդը շատ է պատվում, նա պաշտում է եկեղեցին, այն Լուսաւորչի եկեղեցին և ոչ թէ ձեզ, նրա անարժան պաշտօնեաներին... մտածեցէք և մի հասցրէք մինչև ծայրը ժողովրդի համբերութիւնը։

Աստուած տայ որ ժողովուրդը այնքան զարգանայ, որ հասկանալով ձեր անիրաւութիւնները ու հարստահարութիւնները մեղադրէ միայն ձեզ, պաշտօնեաներին, բայց ոչ թէ [illegible] անջատվի, գնայ բողոքական կամ կաթոլիկ դառնայ, վրէժխնդիր լինելով ձեր ճնշող վարմունքից...որ լուսաւորվելով, սովորի զանազանել սկիզբը գործադրութենից, սովորի որոշել մեր եկեղեցու մաքուր հիմքը, հոգևորականների անմաքուր վարմունքից...

Այն ժամանակ դժուար լինէք ..դուք կը կորցնէք ձեր ժողովրդականութիւնը։

Եւ այն ժամանակ ժողովուրդը զարգանալով և ազատ հայ մնալով, չի ընդունի բողոքականութիւն, կաթոլիկութիւն, կամ այլ կրօնք,—ոչ, նա կը հանդիսանայ պաշտպան Լուսաւորչի եկեղեցու մաքուր և սկզբնական գաղափարի, ընդդէմ նրա անարժան ժամանակակից պաշտօնեաների...

---

*) Ինքը Լուսաւորիչը պսակված էր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԷԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Անցեալ համարում մենք յիշեցինք, որ փետրվարի 25-ին, կիրակի օրը, գումարվեցաւ Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։

Այդ օրը կարդացվեցաւ տարեկան հաշիւը, քննողական յանձնաժողովի (Ռէվիզիոննայա կօմիսսիա) զեկուցումն և ընկերութեան խորհուրդը մի առաջարկութիւն արաւ։ Հաշուից երևեցաւ, որ մինչև յունվ. 1-ը 1873 թուի ընկերութեան անդամ գրվել են 633 հոգի, որոց շրջական դրամագլուխ է՝ 348,920 ռուբլ. իսկ ապահովութեան դրամագլուխ 3,140,280 ռ։ Տարեկան ընդհանուր Բալանսը կազմում է 63,005,593 ռուբլի 50 կոպ.։ Գործունէութեան գլխաւոր ճիւղերը հետևեալներն են՝ հասարակ ընթացող հաշվով (текущій счетъ) բանկի մէջ մտել է գումար՝ 1,380.862 ռ. 12 կ. որից հանուցած է 1,246,429 ռ. 12 կ։ Պայմանական ընթացող հաշվով՝ մտել է 3,254,352 ռ. 32 կ. իսկ հանուցած է 2,852,357 ռ. 98 կ.։ Առանց պայմանաժամի դրված գումար (բէզսրօչնի վկլադ) եկել է՝ 983,142 ռ. 19 կ., յետ դարձրած է 669,118 ռ. 60 կ.։ Պայմանաժամով դրած գումար՝ 382,921 ռ. 88 կ., յետ դարձրած է 34,045 ռ. 87 կ.։ Առևտրական փոխանակագրերի զեղչում 2,006,868 ռ. 19 կ. մուրհակների թիւը 1080, այդ գումարից 483 մուրհակի պարտականները վճարել են 913,643 ռ. 5 կ.։ Միւսների ժամանակը դեռ հասած չէ։ Փոխանակագրերի զեղչում ապահովութեամբ՝ 24 մուրհակ 89,923 ռ., 16 մուրհակից ստացուել է 65,720 ռ.։ Փոխ տուած գումարները տոկոսաբեր թղթերի գրաւականով՝ 1,040,238 ռ. 50 կ. յետ առած է 682,185 ռ. 50 կ։ Մասնաւոր ընթացող հաշվով տուած գումարները, ապահոված գին ունեցող թըղ-